


— Համիտլամականութիւնը զարթեց և նոր հաւատով գործե հպաւ յոյն-տաճկական պատերազմից յետոյ, երբ նորից ծնաւ հաւատ դէպի տաճկական ղէնքի ոյժը: Իննսուն և եօթ թուից այդ ուղղութեամբ գործունէութիւնը կատարւում էր և կատարւում է Կովկասի սահմաններում, որտեղ յայտնի գործում են Պօլսից եկած քարոյիչներ, իսկ մեր շահասէր քիւրդերատիան դաշն է կապում նրանց հետ՝ ջնջելու մարդկային կեանքի և իրաւանց ձգտող տարրերը: Ինչպէս լրագիրները հաղորդում են, զինուած զնդեր է պատրաստում երկաթուղու գծերի պաշտպանութեան և խռովութիւնները զսպելու համար: Առաջարկ է եղել Գորոպեկի խմբին «հայրենասէրների» շարքերի մէջ ընդունելու նաև Կովկասի թուրքերին և այժմս մի միայն նշանի մատին է խնդիրը: Ինչպէս յայտնի է, սե հարիւրեակները խաչազարդ նշան ունին, իսկ մահմէդականները խնդրել են, որ իրենց հայրենասիրական նշանը դրօշակ և կիսալուսին անեն: Ծնորհաւորում ենք մեր բիւրօկրատ խելօք քաղաքագէտներին և մաղթում, որ նրանց այդ նշանաւոր հայրենասիրական քայլն «անփոշիման» լինի: Բայց կապրենք, կը տեսնենք:



ՄԱՐԳԻԿ, ՏԻՊԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

ՀԱՅԿԱՍՏԱՆ ՀԱՐՅԸ.



Յօդ. Ալէքսանդր Ամբիքէասրովի.

(Շարունակութիւն *)

Երբ նոյն «Ռուս պանդուխտը» բանը հասցրեց «կարմիր կապերի», որով իբրև թէ փաթաթւում էին առողջ հայերը, որպէս զի եւրոպացիք նրանց թուրքերից վիրաւորուած ընդունէին, եւ փորձեցի ձայն բարձրացնել զրպարտութեան այդ ամբողջ սիստեմի դէմ . . . և իմ

*) Տես Արարատ 1905 թ. № 12:

կենդանի վկայութիւններով և բազմաթիւ փաստերով լի յօդուածս, որ հրապարակ էր հանուած յանուն ճշմարտութեան, չը կարողացաւ տպագրուել: Ինչ վերադարձրած սրբագրութիւնը ցայսօր էլ մնում է հին թղթերիս մէջ որպէս անյաջողութեան տխուր յիշատակ, որով բիւրօկրատական տրամադրութիւնը խեղդեց ճշմարտախօս բերանի ձայնը և հրամայեց կոյր աչքերով նայել իրականութեան վրայ:

Ահա այսպէս՝ բիւրօկրատիան, գիւտնագիտութիւնը և նրանցից ներշնչուած պահպանողական մամուլը իննսուսական թուականներին հայերի դէմ ուղղակի թշնամական դիրք բռնեցին և նոյնը պահպանեցին համարեա մինչև մեր օրերը: Տարաբաղդաբար չի կարելի ասել, որ նրանք զգալի դիմադրութեան հանդիպեցան ռուսական հասարակական կարծիքի կողմից: Մեր հասարակութեան նոյն իսկ առաջաւոր խմբերը հայկական մարտիրոսագրութեանը վերաբերւում էին անտարբերութեամբ՝ որպէս մարդկային տեսակէտից ցաւալի, բայց օտար և հեռաւոր գործի: Այսպէս օրինակ, հայութեանը ծանր և անարդար հարուած հասցրեց Լ. Ն. Տօլստոյ, մերժելով մասնակցել Գ. Ն. Զանչեանի ժողովածուի մէջ, որ հրատարակուեց յօդուած թուրքական հալածանքի զոհերի Փոքր Ասիայում: Ռուսական շատ յառաջադէմների տեսողութեան և Հայաստանի դժբաղդութեանց մէջ դրուած էր ռուսական Անդրկովկասի հատուածակողմը՝ պրիզման, որի քաղաքներում՝ մինչև վերջին աւերածութիւնը, հայերը ներկայացնում էին պահպանողական դրամատէր (կապիտալիստ) տարր: Այդպիսի նախապաշարմունքից ազատ չէր նոյն իսկ հանգուցեալ Ն. Կ. Միխայլովսին: Այսպէս ահա հայկական հարցը ռուսական հասարակական կարծիքի առաջ երկու երկանաքարի արանքն ընկած հատիկի վիճակն ունեցաւ: Յետադէմներն ու պահպանողականները, համապաւնականներն ու ռուսացման կողմնակիցները հայութեանը՝ որպէս յեղափոխական ոյժի, պատերազմ յայտնեցին, իսկ յառաջագիւտականները, չը մոռանալով հայերի միջի «չար»

չինքրին», սառը ջուր էին լցնում իրենց անբասիր և անտարբեր պաշտպանութեամբ, առանց յափշտակուելու, մի միայն ընդհանուր մարդասիրութեան ծառայելու պարտականութիւնից դրդուած, Հարկաւոր էր ժամանակակից Կովկասեան դէպքերի ամբողջ սարսափը, որ բացուէին բոլոր ռուսական աչքերը հայկական վշտի դէմ և հասկանային այն պետական չարիքը, որ Տաճկաստանը աճեցրեց իրեն մօտ արտասահմանում, իսկ մենք հնազանդութեամբ իւրացրինք, փոխադրեցինք մեր երկիրը և կատարեալագործեցինք՝ վրան Պետերբուրգի բիւրօկրատիայի ծաղիկներից պատուաստելով:

Պրանսիայում հասարակական խղճի ձայնը, որ դժգոհ էր Դանտոյի՝ ռուսաց դուր գալու նպատակաւ՝ հայատեցութեան քաղաքականութեամբ, շատ աւելի բարձրագոյ էր: Պրանսիայում հայկական հարցի համար նշանաւոր շրջան է 1900 թուականը, երբ Փարիզի հեղինակաւոր քաղաքէտների և գրական գործիչների խումբը—Անատօլ Պրանս, Ժան Ժօռէս, Ֆրանսիս Պրետանսէ, Կլէմանսօ և ուրիշները Պրանկօ—Ռուսական դաշնադրութեան սխալն ուղղելու նպատակաւ սկսեցին հրատարակել «Պրօ Արմենիա» թերթը: Նոր լրագիրը՝ իւր իսկական տիրոջ և խմբագիր գրական գործիչ և բանաստեղծ Կիառի ձեռքին (նա 1896 թուին ակնատես էր Պօլսոյ հայոց կոտորածին), արագ եւրոպական հռչակ և որոշ հեղինակութիւն ձեռք բերեց: Նրա կուսակցական անկողմնապահութիւնը մանրամասն լուսաբանեց եւրոպացոյց աչքի առաջ հայ ժողովրդի իսկական դրութիւնը և՛ մի շարք համակրական ցոյցերից յետոյ, հասցրեց այնպիսի խոշոր հետեանքի, ինչպէս 1902 թուի հայասիրական կօնգրէսը Բրիւսելում, որին մասնակցեցին Պրանսիայի, Դանիայի, Բէլգիայի և այլ երկիրների ներկայացուցիչները: Ոչ այնքան բազմամարդ համաժողովի պակասը զգալի կերպով լրացրին Եւրոպայի բոլոր ծայրերից ստացուած համակրական գրաւոր արտայայտութիւնները ժամանակակից քաղաքակրթութեան համարեա բոլոր ներկայացուցիչների կողմից և որ գլխա-

ւորն է, օրինական ճանապարհով բողոքելու համար իւր մշակած ծրագրով և ապագայի համար իւր տուած օրինակով։ 1903 թուի փետրվարի 13-ին տեղի ունեցաւ Փարիզի թատրոններից մինում հոկայական միտինգ, որին մասնակցում էին 6000 հոգի և որտեղ ճառեր արտասանեցին Պրեսանսէ, Կոչէն, Ժօռէս, Պօլ Լերօլ և որին նախագահում էր Դէստուրնել դը Կոնստան, որ պատգամաւոր էր Հաագայի վեհաժողովին և որը միջազգային խաղաղութեան գաղափարի ամենաոգեւորւած և աչքի ընկնողներից «պատիֆիստներից» մէկնէ և մեծ հռչակ ունի Պրանսիայում։ Այդ միտինգի տպաւորութեան արդիւնքն եղան բոլոր տէրութեանց մէջ և Իտալիայում առանձին ուժով արտայայտած համակրական ցոյցերը։ Միլան, Հռոմ, Ջենովան և այլն, Փարիզի միտինգին արձագանք տուին հայասիրական հոկայական ցոյցերով։ Այստեղ հայկական գործի պաշտպանների շարքը մտան այնպիսի մարդիկ, ինչպէս մարգարան Սերջին, ընկերվարագէտ Տուրատին, բանաստեղծուհի Ադա Նեգրին, Անջէլօն, Գուբերնատիսը, Մօնետան և այլք, որոնք, ճշմարիտն ասած, ժամանակակից Իտալիայի ինտելիգենցիայի թագ ու պսակ են։ Անգլիան երկու ամսուայ ընթացքում՝ սեպտեմբերի 29-ից մինչև 1903 թուի նոյեմբերի 16-ը, 64 միտինգ կազմակերպեց իւր «Բալիան կոմիտէի» միջոցաւ, որոնցից ամենանշանաւորն էր Սէն-Ժամ-Հալի միտինգը Գլադստօնի ծեր ոչխատակից Ջեմս Բրայսի նախագահութեամբ։ Ընդհանրապէս 1903 թիւը՝ շնորհիւ Մակեդոնիայում սուր կերպարանք ստացած նոր խռովութեան, որոնք կրկին յիշեցրին Եւրոպային մոռացուած Բերլինի դաշնագրի 23-դ և 61-դ յօդուածները, հայկական հարցի համար շատ բաղաւոր տարի էր։ Փարիզի նոր միջազգային համաժողովը 1903 թուի հոկտեմբերի 25-ին «Կոնստինէնուպոլիս» հիւրանոցի դահլիճներում կայացրած ժողովներով, և Սարա Բերնարի թատրոնում տեղի ունեցած միտինգով կրկին ընդգծեցին Պրօ Արմենիայի միջազգային (քարոզի) պրօպագանդայի լրջութիւնը և եւրոպական համակրութեան

արագ աճումը յօգուտ նրա դրած խնդիրներէ։ Նոյն 1903 թուին այդ խնդիրը հասարակական կարծիքի նախապատ-
րաստական շրջանից փոխադրեցին Անգլիայի և Ֆրանսի-
այի կառավարութեանց ներկայացուցչական ժողովների
պաշտօնական քննութեան։ Սօլունի նոր սպանութիւնները
1904 թուին, սկիզբին Ֆրանսիա Պրեսանսէին առիթ տուին
սրտգամաւորական ժողովում հարցապնդում անելու։
Անգլիայում նման դերն իւր վրայ վերցրեց Ջէմս Բրայսը։
Վերը մենք տեսանք, որ Անգլիան դիւանագիտական
պարտութիւն կրեց իւր 1896 թուի հայասիրական նախա-
ձեռնութեան մէջ։ Այդ անյաջողութեան ապաւորութիւն-
ները մնացել են մինչև մեր օրերը։ Անգլիական կառա-
վարութեան պատշտական համակրութիւնները գէպի հա-
յեր դեռ անփոփոխ են մնում, բայց կաթով բերանն
այրած խորամանկ Ալբիօնը սովորել է վիշել և ջրին։ Հա-
յաստանն ազատելու գործում նա պատրաստ է հետևել
ուրիշի ազդու նախաձեռնութեան, նա պատրաստ է, բայց
իւր վրայ առնել այդ նախաձեռնութիւնը, նա երբէք հա-
մաձայն չէ, յիշելով մերձաւոր անցեալում կրած վիրաւո-
րանքը։ Անգլիական քաղաքագէտների կարծիքով նախա-
ձեռնութիւնն այժմս Ֆրանսիային է պատկանում։ Անգ-
լիան, Ֆրանսիան և Իտալիան միշտ ազատութեան գաղա-
փարին հաւատարիմ, խաղաղ կուլտուրայի եռապետական
գաշնակցութիւն են ներկայացնում, որ հակադրած հին
զօրապաշտական եւրոպայի եռապետական և երկպետական
գաշնադրութիւններին, պարտաւոր է մարմնացնել երկրիս
վրայ քաղաքական դրախտը, յանուն քաղաքակրթութեան
վիշելով անարգարութեան շղթաները և կատարելով ճշն-
շուած ազգերի օրինական պահանջները։ Տարաքաղաքար
այդ բոլոր դեղեցիկ խօսքերը դեռ ապարդիւն կախուած են
մնում օդի մէջ։ Անգլիան սպասում է Ֆրանսիայի քայլե-
րին, իսկ Դէլկասէի Ֆրանսիան հայերի համար նոյնքան
քիչ բան արաւ, սրբան և հանօթոյի ժամանակ, Հայկա-
կան ազատագրական քաղմութիւ գործիչների վկայութեամբ
Դէլկասէն ի խորոց սրտի հայասէր էր։ Այդպէս բնորոշեց

նրան նաև հասարակապետութեան նախագահ Լուրէն հայոց Կաթողիկոսի պատգամաւորներին ընդունելիս: Յամենայն դէպս հայկական խնդիրը Դելկասէին է պարտական, որ դուրս լողաց պարլամենտական հակաճառութեանց միջոցին և նախարարը, չընայեած հարցապնդումների անախորժ և փափուկ բնաւորութեան, չաշխատեց սուղել այն ծովի անդունդը, ինչպէս այդ արաւ նրա նախորդը: Հէնց Դելկասէի ագիտացիան Հանօտոյի դէմ գրաւական էր, որ նա չի ցանկալ իւր նախորդի շաւղովը ընթանալ: Բայց այնուամենայնիւ Դելկասէի նախարարութիւնը, որ ընկաւ Վիլհելմ II-ի արկածախնդրութեան շնորհիւ ստեղծած Մարօկկոյի խնդրի պատճառաւ, հայկական հարցը նոյն անմխիթար վիճակում թողեց, ինչ վիճակում որ ինքն էր ստացել: Դելկասէն չէր համարձակուի և ոչինչ չէր կարող անել հայոց համար առանց Ռուսիայի կամքի. իսկ ռուսական կառավարութիւնը վերջին տարիներս կամակորութեամբ ոչ միայն շարունակում էր մնալ իշխան Լօբանով Ռոստովսկու թողած ողբալի գաղափարի վրայ, այլ աւելի ևս աւելացրեց իւր գործունէութիւնն այդ ուղղութեամբ:

Կովկասն անցրեց ռուսացման դաժան շրջանը, որից ամենից շատ տուժեցին հայերը՝ որպէս տեղական ազգերի մէջ ամենից կուլտուրական և ազգային ինքնագիտակցութեան տէր: Ռուսացման և հայոց կղզիացած դրութեան ընդհարումը դրամատիրական և մանաւանդ կրօնական հողի վրայ, կարծես երևակայական ապացոյց տուին Ստամբուլից խաբուած վերջին երկու թագաւորութեան ժամանակուայ բիւրօկրատիայի նախապաշարումներին, որ հայաստանը ամեն տեսակ յեղափոխութեան բուն էր ընդունում և ահա Կովկասի վրկութիւնը յանձնուեց Գալիցիների երկաթէ գաւազանին:

Գալիցիների դաժան ըէժիմը, ոչ միայն չը խաղաղացրեց Կովկասը, այլ մի շարք միջոցներով, որոնցով հայերին ստորացրին երկրի միւս ազգաբնակչութեան առաջ, նրանց հասցրեց այն հետեւանքի, որ մօտիկ անցեալում մեծ իշխան

Միխայիլ Նիկոլայեիչի ֆոխարքայութեան և Գոնդուկով Կորսակովի կառավարչապետութեան ժամանակ հայ ազգը, որ համարում էր ամենաօրինապահ, պահպանողական և ուսական իշխանութեան ամենաամուր նեցուկը Կովկասում, իրօք յուզուիլ սկսեց Կովկասեան վարչութիւնը՝ տեսնելով իրեն դէմ՝ առ դէմ՝ կանգնած ազգային յեղափոխութեան առաջ և միևնոյն ժամանակ չը կամենալով վերացնել այն միջոցները, որոնք առաջ էին բերում հայկական դժգոհութիւնը, սկսեց որոնել տեղական մի այլ տարր, որը յօժար և ընդունակ լինէր հարկաւոր դէպքում դէմ դնել անշատողական (սեպարատիստական) ապստամբութեան, Կովկասում ընական մրցակից են վրացիք, բայց հակառակ ուժեղացրած շողոքորթութեան և հրապոյրների, որ նրանց շնայում էր հայատեաց տխրահռչակ հրապարակախօս Վ. Լ. Վելիչկօն, հակառակ նրա դուրովաշարժ արցունքների հայ կապիտալի միջոցով ստրկացրած Վրաստանի համար, այդ երկու ազգերի մէջ կուլտուրական միութեան այնքան բազմաթիւ կողմեր երևան եկան, որ արտաքին, մակերեսութեան տարածայնութեանց պատճառով չէր կարող ցեղական լուրջ քաղաքական կռիւ առաջ դառնալ։ Դրա համար աւելի մեծ դրաւական էր ներկայացնում կուլտուրապէս ստոր տարրը՝ մահմէդական թուրքերը։ Անդրկովկասեան քրիստոնեաների դարաւոր թշնամիներ, ճնշուած մի միայն ուսական նուաճումներով, խաղաղ մի միայն Կովկասում զետեղուած զինուորական ոյժի երկիւղից՝ նրանք հայերի դէմ լի են ատելութեամբ, որի մէջ անշուշտ կան կրօնական և տնտեսական պատճառներ, բայց որի գլխաւոր հիմքը օրգանական, ժառանգական, ցեղական է։ Մահմէդական անիշխանութիւնը Անդրկովկասում սկսուեց աւաղակութեան հատ հատ դէպքերով, որը տեղական իշխանութեան անգործութեան կամ դանդաղութեան պատճառով սօցիալական համաճարակի ընաւորութիւն ստացաւ Գանձակի նահանգում։ Մահմէդական աւաղակային «ասպետութեան» հայատեցութիւնը միանգամից աչքի էր ընկնում. այս խօսքը շատ տեղին է մա-

նաւանդ այն պատճառով, որ աւագակային խմբեր կազմակերպելու գործում մասնակցում էին թուրք կիսավայրենի ազնուականութեան ներկայացուցիչ «բէկերը», որոնք անձնատուր էին լինում աւագակութեան կամ աղքատութիւնից, կամ վրէժխնդրութիւնից և կամ աքրեկային (քրիստոնէական) յանդգնութիւնից: Հռչակաւոր աւագակներէից մինը՝ Մուրզակուլովը նոյն իսկ Գանձակի գիմնազիօնի դասընթացն էր աւարտել: Շատ սակաւ էր պատահում, որ թուրք աւագակը համարձակուէր յարձակուել ռուսի վրայ և ռուս փոքրաթիւ զոհերը, սովորաբար պատահում էին սխալմամբ, երբ նրանց հայ էին կարծում: Այդ սխտեմը, որի ետեւ թագնուած էր միայն ասիական զգուշութիւն, — մի առ ժամանակ իրեն դէմ չը դրդուելու ռուսական իշխանութիւնը անմիջական անձնական թշնամութեամբ, — սխալմամբ մեկնուեց թուրքերի ռուսասիրութեամբ: Ի հարկէ այդ բոլոր Քեարիմները, Նաբինները, Մուրզակուլովներն ու Մուրադները իշխանութեան կողմից հալածւում էին ի պաշտօնէ, սակայն մեծաւ մասամբ անյաջող, որովհետեւ աւագակութեան դէմ մաքառելու նպատակաւ կաղմակերպուած համայնական պահակախումբը, որ հէնց թուրքերից էր հաւաքուած, ոչ միայն ներողամիտ էր դէպի իւր հայրենակիցները, այլ շատ յաճախ ընկերակցում էր և մասնակից էր լինում նրան: Բայց հալածանքի հետ միասին տեղի ունէր նաև բոմանտիքական համակրութիւն դէպի այդ ժամանակակից Կարլ Մօօրները, որոնք իբրև թէ վրէժխնդիր էին լինում հայ դրամատիկերից թուրքերի աղքատանալու պատճառով, մանաւանդ որ այդքան ասպետաբար էին վերաբերում և խնայում ռուս գաղթական գիւղացիների կեանքն ու գոյքը: Տարաբաղդաբար մի բան միայն չը նկատեցին, որ այն ռուս գիւղացիների հետ, որոնք իբրև ազանգաւորներ կառավարութեան աչքին առանձին նշանակութիւն չունէին և չէին հովանաւորւում, թուրքերը նոյնպէս էին վարւում, ինչպէս և հայերի հետ:

Թուրքերին «բարեյոյս» տարր ընդունելը Անդրկովկա-

սում, որոնց վրայ ադմինիստրացիան կարող էր յուսալ հայկական յեղափոխութեան դէպքում, իշխ. Գօլիցինի կողմից սխալն էր: Նա ընկաւ այն դադտնի ոյժի թակարդը, որը շատ վաղուց Փոքր Ասիայից Արաքսի վրայով սողացել էր, որպէս զի կարողանար կրօնական և ցեղական դաւադրութեան այն նուրբ ցանցով շրջապատել Անդրկովկասը, որը կոչւում է համիսլամական միութիւն: Այդ՝ Արդուլ Համիդի հիմնած, օրհնած և զինած կաղմակերպութիւնը, որի նպատակն էր կռուել ռուսական թոյլ ազգեցութեան դէմ Փոքր Ասիայում, ծնունդ առաւ այն ժամանակ, երբ մենք այնքան քաղաքավարի կերպով օգնում էինք Ստամբուլին՝ խեղդելու այն ազգի ազատութեան վերջին ձայնը, որը տասն և եօթներորդ դարուց տալիս էր ռուսական յառաջխաղացութեան բանալիներ Մերձաւոր Արևելքում և Կովկասի վաթսուհամայ պատերազմների ժամանակ, և Փոքր Ասիայի կռիւներում թուրքերի դէմ՝ բազմաթիւ մեծ ծառայութիւններ մատուցեց: Մեր թշնամիները մեզանից լաւ գնահատեցին հայերի դերը որպէս Ռուսաստանի պատմական և ընական դաշնակիցների և հէնց որ մեր գիւտնագիտութիւնը բալկանեան հիասթափութիւնների ազգեցութեան ներքոյ Մերձաւոր Արևելքից երեսը Հեռաւոր Արևելք դարձրեց, սուլթան Արդուլ Համիդը շտապեց քանդել և անապատ դարձնել ծածկահայաստանը, որպէս ռուսական անցեալ և ապագայ արշաւանքների անխուսափելի կայան: Կուրացած Մոսկովեան ձևի համասլաւեան գաղափարով, յափշտակուած ռուսացնելու տենչով, «համաշխարհային սօցիալական յեղափոխութեան» ուրուականով սարսափած և սեպարատիստական տենչանքների կասկածով խաբուած ռուսական բիւրոկրատիան հասկանալ չէր ուզում, որ Արդուլ Համիդը՝ կոտորելով Սասունում և Փոքր Ասիայում 300,000, ինչպէս և այլ տեղերում տասնեակ հազարաւոր հայերին, իսկապէս ոչնչացնում է կէս միլիօն ռուսական առաջապահ գունդը և եթէ ոչ յաւիտեան, գոնէ տասնեակ տարիներով զրկում է մեզ երեք միլիօն մի ժողովրդի

վատահումութիւնից, որի համակրանքը այնչափ առաւելութիւններ էր ստեղծում մեզ համար փոքրասիրական պատերազմների թատերաձայրում: Ռուսական յարձակողական արշաւանքների յաղթական լինելը գլխաւորապէս կապուած էր այն հանգամանքից, որ ռուսական զօրքը թշնամու վրայ շարժւում էր բարեկամ երկիրների միջով— Դանուբի սլաւոնական և հայկական երկիրներով. նոյն իսկ լեհական ապստամբութիւնը ճնշելիս մենք նոյն առաւելութիւնն ունէինք մեր ձեռին ի դէմս փետրվարի 19-ի հրովարտակով ազատած ճորտերի: Եապոնական պատերազմը, համարեա մեր առաջին փորձն էր մեզ անբարեացակամ հողի վրայ և կասկած չկայ, որ չպէտք է մոռանալ այդ նշանաւոր հանգամանքը միւս բազմաթիւ պատճառների շարքում, որոնցով և բացատրւում է ռուսական զօրքի տրագիքական պարտութիւնը Մանջուրիայում: Արդուէլ Համիդը հայերին կոտորելիս, կոտորում էր ռուսական ոյժը, ռուսական համակրանքը: Իննսունական թուականները Տաճկա-Հայաստանում մեզ համար Մանջուրիա ստեղծեցին: Իսկ իշխան Գօլիցինը ամեն միջոց դորժ դրեց, որ Մանջուրիա դառնայ և ռուսական Անդրկովկասեան Հայաստանը՝ իւր յանկարծական իրաւազուրկ դրութեամբ, յուսահատութեան հասցրած խաղաղ բնակիչներով, որոնց հեղեղեցին մահմէդական խունխուզների խմբերով:

Ռուսացման քաղաքականութեան շնորհիւ Կովկասը տուժեց Ռուսաստանի ազգային ամենանշանաւոր հարըստութեան աղբիւրով— Բագուինաւ թարգիւնաբերութեամբ: Եւ ո՞րքա՞նչ, արդեօք դա հատուցման սկիզբը չէ միայն: Այո, երբ ես գրում եմ սոյն տողերը, ստացուած ռուսական թերթերը պատմում են, որ թուրքերը Բագուի լիազօր տէր են, հաշտութեան պայմաններ չեն ընդունում և իշխանութեան ներկայացուցիչներին յայտնում են, որ իրենք ռուսների դէմ ոչինչ չունեն, բայց հայերին չեն ցանկանում. — թող հայերն հեռանան այդ երկրից, ուր որ ցանկանում են, եթէ որ չեն ուզում նորանոր կոտորած:

ներս: Իսկ կոտորածը թուրքերի համար ի հարկէ միշտ յաղթական կլինի, որովհետեւ նրանք հիւանալի ղինուած են, իսկ հայերի ձեռին եղած ինքնապաշտպանութեան զէնքն էլ ռուսական ադմինիստրացիան ընդունում է անջատման ապստամբութեան նշան և յեղափոխական միտումների ապացոյց: Ահա այսպիսով Բագուն, Կովկասում գերիշխող լինելու այդ արեւելեան բանալին, որի նուաճման համար քրիստոնեայ երեք ժողովուրդների՝ ռուսների, հայոց և վրաց կուլտուրան այնքան ճիգ գործ դրեց, իրականապէս նորից մահմէդականների ձեռին է և թաւ թարական անիշխանութիւնը ուլտիմատում (վերջագիր) է ներկայացնում ռուսական կառավարութեան.

Սակայն ես դեռ կասկածում եմ՝ արդեօք «թաթարական անիշխանութիւն» բանաձևը, որ այդքան յաճախ գործ է դրում ռուսական մամուլի մէջ, անյաջող չէ այս դէպքում: Ճիշտ է, նա լաւ բնորոշում է շարունակուող քաօսը, որ արեամբ և բոցով ամայացնում է դժբաղդ երկիրը. բայց այդ քաօսը մի միայն անիշխանական հետեանք է ոչ թէ անիշխանական, այլ խիստ կերպով կառավարուող և խնամքով ուղղուած պատճառների: Սոյն խօսքերս բոլորովին չեն ակնարկում այն լուրերը, որոնք մեծ արձագանք գտան, ոչ թէ միայն արտասահմանեան մամուլի, այլ և ռուս յառաջադէմ թերթերի մէջ, որ իբր թէ Բագուի ողբերգութիւնը գիտակցաբար պատրաստուած և թոյլատրուած է հայերին թշնամի Կովկասեան ադմինիստրացիայի ձեռքով: Այդպիսի բաների հնարաւորութեան մասին կամ պէտք է խօսել մանրամասն և կամ ոչինչ չասել: Ես ի նկատի ունիմ ոչ թէ ներքին՝ այլ արտաքին պատճառներ. թուրքական սահմանից մղուած համիդական այն կանոնաւոր ագիտացիան, որը մի առ ժամանակ դադարեցնելով իւր տան ներքին դահճութիւնը, — չէ որ այնտեղ՝ քրդերի ձեռքով հայերի 10% կոտորելով, կարելի է մի առ ժամանակ սպասել, փոխադրուել է դահճի նոյն դերը մեզ մօտ կատարելու, կոտորելով և կողոպտելով այն փրկարար պահեստի զօրքը, որպիսին

հանդիսանում էր հայութիւնը Սուլթան Աբդուլ Համիդի աչքում Տաճկահայաստանում և Անդրկովկասի հայկական մասերում: Այդ խաւար ու մոլեռանդ ագիտացիան ոչ միայն անիշխանական չէ, այլ ընդհակառակն՝ կարող է կոչուել կարգապահութեան կատարելատիպ, որ և ապացուցւում է նրա՝ լոյս աշխարհ հանուած այնպիսի տրււրահռչակ փաստերով, ինչպիսին էր 1899 թուին յայտնուած դաւադրութիւնը Քանձակում:

Ես՝ տողերիս հեղինակը, ոչ միայն Իսլամի թշնամի չեմ, ինչպէս որ կարող են եզրակացնել այդ բանին հակումէս մարդիկ համիսլամական միութեան դէմ արած նախազգուշութիւններից, այլ ընդհակառակն, ինձ շատ անգամ պատահել է տպագրական խօսքով պաշտպան հանդիսանալ Ռուսաստանի մահմէդական այլազգիներին յանուն արդարութեան և նրանց մարդկային իրաւանց, որոնք ոտնակոխ էին լինում ռուսացման պահանջների հեղինակներին աւելի ևս դուր գալու նպատակով եռանդակոխ եղած վարչութիւնների կողմից: Ես միանգամ նոյն իսկ դատի ենթարկուեցի մի թուրք բէկին — իրաւաբանին լրագրական խիստ յօգուածովս պաշտպանելու համար, որին, որպէս իւր վատ արարքներ մերկացնողից ազատուելու համար, գաւառապետը մեղադրել էր աւաղակային որջ պահելու քրէական յանցանքի մէջ: Վօլգայի միւս կողմը՝ Սիբիրում, Կովկասում, Տաճկաստանում — ամեն տեղ ես ունէի մահմէդական բարեկամներ: Նրանցից դէպի շատ շատերը ես ցմահ խորին յորդանքով լի կը մնամ, որովհետեւ նրանց՝ Մահմէդի այդ աշակերտների անկեղծ, խելացի և զգայուն մարդասիրութեան կարող են նախանձել իրենց քրիստոնեայ անուանողներից շատերը: Դրանով հանդերձ ես համոզուած եմ, որ կովկասեան տնկարդութիւնները արհեստական ծագում ունին, որովհետեւ սեփական աչքերովս չափազանց շատ օրինակներ եմ տեսել քրիստոնեաների և մահմէդականների խաղաղ դրացիութեան, ուր որ նրանց ազատ են թողել փոխադարձ յարաբերութիւններ հաստատուելու, որտեղ նրանց չի տիրում

որ և է կրօնական կամ քաղաքական փոթորիկը: Չէ որ Բօլգարիան կարողացաւ կազմակերպել իւր մահմէդականներէ կեանքն այնպէս, որ նրանք թէ քրիստոնեաներին հաւասար իրաւունքներ ունին, և թէ նրանց համար երբէք սպառնալիք չեն: Նոյն իսկ Կովկասը, որ այժմ հեղեղուած է արիւնով և հրդեհի բոցերով ծածկուած, մօտիկ անցեալում ռուսական սահմաններից ամենախաղաղն էր: Չէ որ մօտիկ անցեալում Կովկասեան այլադղինների տրամադրութիւնը կրօնական խտրութիւնից շատ քիչ կախումն ունէր և եթէ կարելի էր սպասել յարաբերութեանց լարուելուն, այդ մի միայն քրիստոնեաների՝ վրացոց և հայոց մէջ, իսկ թուրքերի մասին ոչ ոք երբէք ոչ մի բան չի մտածել: Այժմ Կովկասում չի կարելի առանց պահապանի մի քայլ անել. վճարում են իւրաքանչիւր զաւակին 10 ռ., որպէս զի եկեղեցիներ անցկացնի կայարանից քաղաք մինչև բնակարանը, իսկ միայնակ, կամ լաւ պահապաններ չունեցած դէպքում քաղաքի սահմաններից դուրս գալը անմտութիւն է համարուում և համարեա ինքնապահուածեան փորձին համահաւասար: Իսկ 1889-ին ես մեն մէնակ առանց ու է գէնքի, ոտքով անցայ Կովկասը՝ հեռանալով կանսնաւոր ճանապարհներից մահմէդական տալիների խորքերը և ամենայն տեղ հանդիպում էի սիրալիր և խնամքով լի հիւրասիրութեան, և մտքովս չէր անցնում, որ ինձ որ և է վտանգի եմ ենթարկում. — այդքան խաղաղ էր Կովկասը և վտանգից ազատ: Ընդամենը 15 տարուայ ընթացքում երկիրը վերածնունդ, յետադիմեց դէպի այնպիսի բարքերը, որոնք հազուադէպ էին նոյն իսկ Լեւոնտօսի ժամանակ և որոնց նմանը չի կարելի գտնել Պուշկինի «Ծանապարհորդութիւն մինչև Արգոն» աշխատութեան մէջ: Բայց մենք դժպիսի դէպքերի և «գետի միւս կողմ» երթեկի ողջ չեչենի» շրջանումն ենք: (գլխաւոր)

Համխալովականութեան տաճկական քաղաքական պրօպագանդան, որի մէջ կրօնական ֆանատիկոսութիւնը նպատակ չէ, այլ մի միայն միջոց, Կ. Պօլսից փոքր Ասիայով հոսում է Անդրկովկաս անընդհատ հոսանքով շատ

վաղուց: Ճիշտն ասած՝ նա այս կամ այն անունով միշտ շարժւում էր մոխրի տակ այն օրուանից, երբ Գունիբի առումը ռուսներին վերջնականապէս կատարեալ տէր դարձրեց կովկասեան պարանոցի: Նա ստեղծեց չերքեզներին խմբական գաղթը, նա էր արժարժում Աբխազիայի ապստամբութիւնը, չեչենների խռովութիւնը, նրա շնորհիւ հաղարաւոր ինգուշներին Սիբիր գաղթեցրին, որտեղ նրանց անխուսափելի մահ էր սպասում թոքախտից: Բայց եթէ վաթսուներկան և եօթանասներկան թուերի Կովկասեան վարչութիւնը ազատ չէր մասնակի, գուցէ և խոշոր սխալներից, յամենայն դէպս ղեկավարող ընդհանուր սկզբունքը՝ ազգային և կրօնական համբերատարութիւնը, այնքան նպաստաւոր կերպով էր տարբերում նրան ռուսական տիրապետութիւնից առաջ Կովկասի անցրած ֆէօդալական մանր կառավարութիւններից, որ համիսլամական քարոզը չէր կարող խոր արմատներ ձգել նրա հողի մէջ՝ որպէս քաղաքական մի ոյժ: Իսլամի կրօնական փանատիկոսները գնում էին Տաճկաստան, իսկ չափաւոր տարրը խաղաղ մնում էր տանը, գտնելով, որ հաւատն իւր կարգին, բայց ապրել պէտք է և քանի որ ռուսական կառավարութիւնը կրօնին ձեռք չի տալիս, որոշ չափով օրինականութիւն եղած երկրում աւելի լաւ է և ձեռնտու, քան օրինազուրկ բռնապետութեան ճնշման տակ, որն՝ ինչպէս փորձեց Տաճկաստան գնացող չերքեզների գաղթը, իւր հիւրասիրութիւնը թափում է նրանով, որ հովանաւորեալներից կազմուէ՝ է խմբեր պաշտօնական տւաղակութեան համար: Կովկասեան ռուսական կառավարութիւնը՝ իւր ռուսացնելու առաջին տրամադրութիւններով, միանգամայն փոխեց իւր նախկին տաքտիկան և սկսեց տնտղել ազգայնական կողմնապահութեան կասկածելի և քմահաճ կարգը (սխտեմը): Առաջ պատուի մէջ էին հայերը, իսկ վրացիք կասկածի տակ: Պատուի արժանացան վրացիք, իսկ հայերի դէմ հալածանք սկսուեց: Մինչև որ երկուսի վերաբերութեամբ էլ յուսախաբ չ'եղան, մահմէդական այլազգիներին խորթ էին պահում և կար ժամանակ, երբ

Թուրքերն իրաւացի կարող էին ասել, որ իրենք Կովկասի ռուսահպատակներից ամենադժբախտն են: «Անբարեյոյս երևացին հայերը, և վրացիք ոչ այնքան բարեյոյս, որքան որ բիւրօկրատիան էր ցանկանում. — եկէք թուրքերին փաղաքէնք»: Ահա ռսիրած դէմքի այս կախարդական փոփոխութեանց շարքի» մէջ, բիւրօկրատիայի այդ եսական քմահաճ փորձերով, որով նա պարզ ցոյց տուեց բոլոր աղգերին, որ նրանք գոյութիւն ունին իրեն համար, և ոչ թէ ինքը նրանց համար, և ով որ ստրկաբար անձնատուր է լինում իրեն, նա տեղ կգտնի նրա գրկում, ահա հէնց այդ ժամանակ աճեցին, որպէս կառավարութեան համակրութեան և հակակրանքի արտացոլացումն վրացական անտարբերութիւնը դէպի Ռուսիան, հայկական յուսահատութիւնը և Աբդուլ Համիդի համիսլամական քաղաքականութեան յաջողութիւնները: Դիմելով անդրկովկասեան հայերի դէմ խիստ միջոցների, ռուսական բիւրօկրատիան՝ կրկին իրեն սպասածին հակառակ, յանկարծ տաճիկներին դաշնակից հանդիսացաւ, որ շատ նպաստաւոր է Սուլթանի համար, բայց ռուսական գործի ինքնասպանութիւն է Փոքր Ասիայում: Ի՞նչ է կատարւում այժմ Կովկասում. Սուլթանի ջրաղացին ջուր են կապում: Եւ մենք սեփական ձեռքերով հոգում ենք, որ թշնամու ջրաղացը լաւ աղայ, մոռանալով, որ եթէ նստաւոր շարժուի ինչպէս որ երազում է Աբդուլ Համիդը, այդ դէպքում նրա համար դժուար չի լինիլ փոքր առ փոքր աղալ և Կարսի նահանգը և Անդրկովկասի վերին մասը՝ թէկուզ մինչև Ախալցխան:

Ե. Տ. Վ. Մ.

